



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26.736

1931 թ.

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՊԼԱՆԸ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ
ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՆ

15 JAN 2010

336

11-11

05 FEB 2007

1931թ. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՊԼԱՆԸ ՅԵՎ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆ
ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՆ

Նյուրեր զեկուցողների համար, կազմված ԽՍՀՄ Ֆին-
ժագկոմատի յեվ հաստատված Համբկ(բ) Կենտկոմի
Ազիտմաս բաժնի կողմից

(35-356)

ՊԵՏՀԱՍ

1931

ՅԵՐԵՎԱՆ
12001

13 NOV 2013

26.736

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

1. Կենտկոմի և ԿՎՀ-ի դեկտեմբերյան (1930 թ.) պլենումը 1931 թ. ժողովրդական տնտեսության պլանի մասին հանաձն բանաձեվում առնենայն վճռականությամբ ընդգծեց Փինանսական սիստեմի դերը ոոցիալիստական շինարարության ներկա ետապում։ Պլենումըն անհրաժեշտ համարեց։

«Վճռականուրեն ուժեղացնել Փինանսական բոլոր որդանների դերը, մտցնել Փինանսական ամենախիստ դիսցիպլինա և խնայողության ռեժիմ, անզայման կատարել յեկամուտները, յուրաքանչյուր կազմակերպության ծախսերը դառնավորել այսպես, վոր նրանք ուղղակի կտիված լինեն այդ կազմակերպության արտադրական և Փինանսական պլանների կատարումից, ամրապնել չերվոնեցը և վճռականուրեն պայքարել Փինանսական սիստեմի դերի ու նշանակության թերագնահատման դեմ՝ սոցիալիստական շինարարության տվյալ ետապում»։

Ֆինանսական սիստեմի դերն ուժեղացնելու անհրաժեշտությունը պայմանավորվում է այն հոկայական հաջողություններով, վոր ձեռք են բերել կուսակցությունն ու բանվոր դատակարգը պլանային սոցիալիստական տնտեսության շինարարության գործում, և այն պատասխանածոու ինդեքսներով, վոր գրեց կենտկոմի և ԿՎՀ-ի պլենումը 1931 թվի համար։

ԹԵՇՔՐԱՆԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿ. 1594
ԳՐԱԺԵԴ. 6350 (Բ.)
ՊԱՏՎԵՐ 2032.
ՏԻՐԱՅ 2,000)



Հ նդամյակի յերկու տարվա արդյունքները ցույց տվին տնտեսության սոցիալիստական սխմանի հոգայական առավելությունները կապիտալիստականի հանդես : Արդյունաբերության ամբողջական արտադրանքը յերկու տարում հասալ 30,456 միլ. ռուբ., պլանի նշած 29,338 միլ. ռ. դիմաց : Արդյունաբերությունն ամբողջովովին վերացրած՝ 4 տակոսով գերակատարեց հնդամյա պլանի ծրագիրը : Մանր արդյունաբերությունը հնդամյա պլանի յերկու տարվա առաջադրությունները գերազանցեց 10 տոկոսով, ապահովելով գյուղատնտեսության արմատական վերակառուցումը, թեթևի արդյունաբերության զարգացման արագացումը և յերկրի պաշտպանունակության ամրացումը : Կոլեկտիվացումը առ 1 հունվարի 1931 թ. ամբողջ Միության մեջ ընդգրկեց բոլոր գյուղացիական տնտեսությունների 24—25 տոկոսը : Շնորհիվ կոլեկտիվացման նման չափերի մենք կարողացանք լիովին ծածկել ցանքերի տարածության կրճատումը կուլակների կողմից, չաշահատիկների ցանքերի պլանը կատարելով 6 տոկ. ավելի, բամբակը—52 տոկ. և ճականդեղը՝ 34 տոկոսով :

Տրանսպորտի ասպարելում—1930 թ. բևեռերի շվճանառությունը հասալ 238 միլ. տ. (1913 թ. 132 տ. գիմաց), փոխարժեած ե 558 միլ. ուղելոր (1913 թ. 185 միլ. գիմաց):

Ները: 1930 թ. ինն ամսվա ընթացքում պրդյունաբեկության արտագրանքը պակասել է—Անգլիայում—
8,4 տոկ., Գերմանիայում—13,2 տոկ., Միացյալ Կանգներում—18 տոկ.: Վերջին ամիսներին ել ավելի յիշանգներում—10 տոկ., 1913 թ. դիմաց, այնինչ ԽՍՀՄ բարեղջում բերքը ավելացել է 43%՝ հաճարինը՝ 26 տոկոսով:

Այն բանի ցուցանիշներից մեկը, թե վորքան ամուռ և առողջ ե այն հիմքը, վորի վրա ծավալվում է սոցիալատական շինարարությունը ԽՍՀՄ մեջ, հանդիսանում ե մեր յերկրի ազգաբնակության աճումը։ 1925 թ. սկզբին մեր յերկրի ամբողջ ազգաբնակության թիվը կազմում էր 140,619,000, 1931 թ. սկզբին մեր յերկրի ազգաբնակության թիվը հասել է 161 միլիոն մարդու։ Այսպես, միայն վերջին վեց տարվա ընթացքում, մեր տնտեսության ամենաբարուն աճման և մասսաների նյութական-կուլտուրական պայմանների լավացման աջանում մեր Միության ազգաբնակությունը աճել է ավելի քան 20 միլիոնով։

Ժողովրդական հասույթը ծրագրված է 49 միլիարդ
սուբլի-գրեթե նույնքան, վորքան հնդամյակի վերջին
տարվա համար (49,6 միլիարդ ռ.) : Հետեւլաբար
հնդամյա պլանի նշանմանը իրակործվում են յերեք
տարրում :

3. Զեռք բերված հաջողությունները թույլ են տալիս, հիմնվելով ոլրուեարիատի և կոլտնտեսական մասսաների առաջավոր մասի հերսության և աշխատանքային խանդավառության վրա, ժողովրդատըն-

տեսական պլանում ծրագրել տեմպերի հետագա արագում : 1931թ. պետական արդյունաբերության աճը բողջ արտադրանքն աճում է 45 տոկ. : Միայն մի տարում մեր արտադրանքն աճել է ցարական Ռուսաստանի արտադրության ամբողջ ծավալի հավասար, իսկ ծանր արդյունաբերությունն աճում է 5% տոկ., թեթևը—29 տոկ. : Կուսակցության լրզունդը՝ «Հասնել և անցնել կապիտալիստական յերկրներին» կենսագործում է : Այսպես, յեթե մենք 1931թ. արտադրենք 8 միլ. տոնն չուգում, ապա այդ կողմից կանցնենք Անդիայից, մինչդեռ 1928թ. Անդիան չուգունի արտադրության մեջ յերկու անգամով շերաղանցում եր մեզ : Պողպատի և քարածուխի արտադրության մեջ մենք կանցնենք 1928թ. Ֆրանսիայից : Գյուղատնտեսության ասպարիզում կոլեկտիվացման չափը Միության մեջ միջին հաշվով կհասնի 50 տոկոսի, իսկ հաշահատիկային հիմնական շրջաններում—80 տոկոսից վոչ պակաս : Այս ինդիրների հաջող լուծումը կտա .

«Մի շարք նոր նվաճումներ, սոցիալիզմի նոր խոշորագույն հաջողություններ կապիտալիզմի դեմ մղված պայքարում : Դլանի կատարումը կոլեկտիվացման ասպարիզում կտա սոցիալիստական տարրերի բացարձակ գերակշռություն գյուղի անհատական սեկտորի հանդեպ, կամրացնի բանվոր գասակարդի դաշինքը գյուղացիության աշխատավոր մասսաների հետ և կավարտի ԽՍՀՄ սոցիալիստական տնտեսության հիմքն կառուցումը : Սա կընի համաշխարհային պատմական նշանակություն ունեցող մի հաղթանակ» (Կե և ԿՎՀ-ի դեկտեմբերյան պլենումի բանաձևից) :

6

4. Հնդամյակի յերբորդ տարվա ինդիրները չեն կարող իրագործվել տարերային, ինքնահօս կերպով : Սոցիալիստական լինարարության պլոցեսը հանդիսանում է պրոլետարիատի և նրա կուսակցության ուժերի լարման, կամքի վճռականության արդյունք և պահանջում է .

«Մեծադույն կազմակերպվածություն և դիսցիպլինա, պետական տնտեսական ու կոռպերատիվ ապարատի բոլոր ողակների աշխատանքի վորակի վճռական լալացում, տնտեսական զարգացման մեջ պլանային սկզբունքի և պլանային դիսցիպլինայի վճռական արմատացում, աշխատավոր ամենալայն մասսաների մեծագույն ակտիվություն և աշխատանքային խանդավառություն» (Կե և ԿՎՀ-ի դեկտեմբերյան պլենումի բանաձեւից) :

Այս սկայմաններում պետք է մղվի պայքարը հանուն Փինանսական պլանի լիակատար և հաշող իրադրման, մի պլան, վոր հանդիսանում է սոցիալիստական հարձակման լայնածավալ ֆրոնտի մարտական ճակատամասերից մեկը, վորովհետեւ .

«Բայց վիկյան հարձակման եյությունը, այնուհետև, կայանում է նրանում, վոր անհրաժեշտ և մորթիկացիայի յենթարկել միջոցների մաքսիմումը մեր ինդուստրիայի Փինանսավորման գործի, մեր սովորողների և կոլյողների ֆինանսավորման գործի համար» (Ստալին) :

Սրանով եւ վորոշվում են 1931թ. Փինանսական պլանի ինդիրները :

7

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. 1931 թ. միասնական ֆինանսական պլանի ընդունութեալը վորոշվում է 31,9 միլիարդ ռուբ., վորը անցած տարվա համեմատությամբ տալիս է 36,2 տոկոս աճում: Համեմատելով այս թիվը (31,9 միլիարդ ռ.) յերկրի ժողովրդական յեկամուտի ծրագրված չափի (49 միլիարդ ռուբ.) հետ, տեսնում էնք, վոր այս տարի ֆինանսական սխտեմն ընդգրկելու յի ժողովրդական յեկամուտի յերկու յերրորդը, այսինքն դժամի չափով ավելի, քան յենթագրվում եր հնդամյա պլանի վերջին տարում (48 տոկ.): Միասնական ֆինանսական պլանի արագ աճումը վորոշվում է ԽՍՀՄ ժողովրդական յեկամուտի աճման արագ տեմպով (1929 թ.-11 տոկ., 1930 թ.- 20 տոկ. և 1931 թ.- 39 տոկ.), վորին ուղեկցում են ժողովրդական յեկամուտի սոցիալական ստրուկտուրայի խիստ փոփոխություններ: Քաղաքի կապիտալիստական տարրերի բաժինը կրճատվել է 1928 թ. 1,5 տոկոսից մինչեւ 1931 թ. 0,4 տոկ., դյուզի կապիտալիստական տարրերի բաժինը՝ 1928 թ. 4,7 տոկոսից մինչեւ 1931 թ. 1 տոկոս:

6. 1931 թ. միասնական ֆինանսական պլանի հիմնական ծախսը հանդիսանում է ժողովրդական տնտեսության ֆինանսվորման ծախսը, այսինքն՝ Խորհրդային Միության սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և վերելքի, սովորդների, կոլխոզների, մեքենատրակտորային կայանների, տրանսպորտի զարգացման, կոմունալ և բնակարանային շինարարության և այլ ծախսերը: Տարեցտարի բարձրահանալով, ծախսերի

այս խումբը 1931 թ. հասնում է 21,1 միլիարդ ռուբ-լու: Կաղիպատի ներդրումների ամբողջ գումարը կազմում է 17 միլիարդ ռուբլի, 1930 թ. 10 միլիարդի գեմաց (70 տոկ. աճում): ԺՏԳԿ-ի պետական արդյունաբերության մեջ ներդրվելու յէ 5,5 միլիարդ ռուբ., (1930 թ. 3,2 միլիարդ ռուբ.՝), պետական ելեկտրիֆիկացիայի մեջ—850 միլիոն ռուբլի, Մատակարարման ժողկոմատի կազմակերպություններում—588 միլիոն դոլարի սոցիալիստական վերակառուցման ռուբ., դյուզի սոցիալիստական վերակառուցման ռուբ.՝, 3,838 միլ. ռուբ. (1930 թ. 1,600 միլիոնի դիմաց) և այլն:

Ֆինանսական պլանի ծախսերի մասում յերկրորդական տոնում են սոցիալ-կուլտուրական ձեռնարկումների ֆինանսվորման ծախսերը: Արանք կազմում են 6,5 միլիարդ ռուբլուց ավելի (այս թվում հաշվետված 800 միլիոն ռուբլի, վոր հատկացված է ժողովական ստանդարտային ֆինանսավորման ընդհանուր գումարից (21,1 միլիարդ ռ.): Սոցիալ-կուլտուրական ձեռնարկումների ծախսերի տեսակարար կշռության մասնակիության պլանի ամբողջ գումարի 20 կազմում և ֆինանսական պլանի ամբողջ գումարի 20 տոկոսից ավելի: Ժողովրդական տնտեսության և սոցիալ-կուլտուրական շինարարության ֆինանսավորման համար ծախսվում է 26,9 միլիարդ ռուբլի, 30,4 միլիարդ ռուբ. ծախսերի ընդհանուր ծավալի մնացած գումարները դնում են պաշտպանությանը, կառավագությանը, պետական փոխառությունների վճարումներին և այլն:

Միասնական ֆինանսական պլանի դրամների նման ծախսումով խորհրդային տնտեսական սխտեմը խիստ գանձագանվում է կապիտալիստականից: Այսպես, Անդրանիկ պլանի ամբողջ բյուջեյի կեսից ավելին ծախսերում է

նոր պատերազմ պատրաստելու և հին պատերազմի
պարտքները վճարելու վրա, ֆրանսիայում ուղղական
կարիքների համար ծախսվում ե պետրյուջեյի յերկու
յերրորդը, իտալիայում՝ 43 տոկոսը, լեհաստանում՝
40 տոկոսը:

Խորհրդային Միությունը աշխարհի միակ պե-
րությարական, սոցիալիզմ կառուցող պետությունն
ե, վոր չնայած իր դեմ յեղած ռազմական ինտերվեն-
ցիայի կատարվի կամպանիաներին, յերկրի պաշտպա-
նության համար ծախում ե պետական բյուջեյի ընդա-
մեթը 6,1 տոկ. և ամբողջ Փինանսական առաջն. 4 տ.

7. Ֆինանսական պլանը մեկնում է ժողովրդական տնտեսության պլանի հիմնական խնդիրներից։ Այդ խնդիրներն են — մի կողմից, վառելանյութի ծրագրի կատարումը, մետալուրգիայի զարգացումը, տրանսպորտային տնտեսության վերակառուցումը և անառաբուժական պրոբլեմի լուծումը։ Մյուս կողմից, 1931 թվի ժողովրդատնտեսության պլանում շեշալ էր վրամական հապիտալ շինարարության հիմնական բնագավառների վրա։ Հիմնական միջոցները ծախսվում են այնպիսի գիտանտների վրա, ինչպես Մագնիսոստրոյը՝ 127 միլիոն ռ., Կուզնեցկստրոյը՝ 114 միլ. ռ., Դնեպրոկոմբինատը՝ 54 միլ. ռ., Նիժեգորոդի ավտոգործարանը՝ 93 միլ. ռուբ., Յարոսլավի ռեզինի կոմբինատը՝ 38 միլ. ռուբ., Մուկվայի ԱՄՈ գործարանը՝ 13 միլ. ռուբ., Խարկովի տրակտորատը՝ 47 միլ. ռուբ., Զելյարստրոյը՝ 8 միլ. ռուբ.։ Այս գիտանտների գործակի մասը կաշխատի այս տարի։ Դրա հետ միասին, գործադրելով կուսակցության 16-րդ համագումարի և Կենտկոմի ու ԿՎՀ-ի գերեսմբերան (1930 թ.) առ

լենումի վորոշումները, 1931 թ. պլանն ապահովում է
թեթեվ արդյունաբերության զարգացման ավելի բար-
ձըր տեմպ, լայն գործածության առաջկա ապրանքնե-
րի ֆոնդը հասցնելով 14,6 միլիարդ ռուբլու, 1930 թ.
11,5 միլիարդի դիմաց :

Ֆինանսական պլանով գյուղատնտեսության սոցի-
ալիստական շինարարության համար բաց թողնվելիք
3,838 միլիոն ռուբլոց պետական սեկտորին (սովորո-
ւները) բաց է թողնվելու 2,093 միլիոն ռուբ., իսկ հու-
բողների, մեքենատրակտորային կայանների և գյուղ-
կողակերպացիայի համար—1,745 միլիոն ռուբ.: Սա հը-
նարավորություն կտա գյուղատնտեսությանը 1931 թ.
ստանալ 1,200 հազար ձիու ուժի տրակտորներ, 820
միլ. ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ, մեքե-
նատրակտորային կայանների թիվը հասցնել 1400-ի,
950 ձիու ուժով: Տրակտորային այս կայաններով մը-
շակվելու յե 25 միլիոն հեկտ. ցանք և 1932 թվի ցանքի
համար պատրաստվելու յե 17 միլիոն հեկտար: Գյու-
ղատնտեսության մեջ յեղած հսկայական ներդրում-
ները ապահովում են կոլխոզներին, ինչպես և Հքա-
վոր ու միջակ անհատական տնտեսությունների յեկա-
մուտի գգավի աճումը:

8. Ժողովրդական տնտեսության պլանի կատար-
ման համար պահանջվում է կաղըբերի պրոբեմի արագ
լուծումը։ Մեր յերկրում այլևս գործազրկության
չկա, մինչեռ կապիտալիստական յերկրաները կրիցիսի
ազդեցության տակ արտադրությունից դուրս են շր-
պըրտում միլիոնավոր քանվորների։ ԽՍՀՄ մեջ կարե-
վոր խնդիր և պատրաստել միլիոնավոր նոր կաղըբեր
զարգացող արդյունաբերության համար։ Այս տարի 2

միլիոն նոր մարդ է ներգրավվելու արտադրության մեջ, մինանական պլանը բավականացչափ ծախս և նախատեսում անականության բոլոր ճյուղերի կազմեր պատրաստելու համար։ Առանձին ուշադրություն է զարգվում պրոլետարական լուսնից տեխնիկական ուժեղ պատրաստելու վրա։ Այդ ձեռնարկումի Փինանսավորման ընդհանուր գումարը կազմում է 1,8 միլիարդ ռ.։ Դրա հետ միասին 1931 թ. ծրագրիը նկատի ռեհի ընդհանուր ուսման ցանցի մեջ առնել 8-11 տարեկան բույր յերեխաներին և մոտ 2 միլիոն մեծահասակ յերեխաների։

9. Խորհրդային Միավությունը սոցիալիստական շենաբարության հսկայական խոնդիրները լուծում եւ վոչ միայն առանց գրսից վարկեր ստանալու, այլ և թէ յերկրի ներսում և թէ նրանից դուրս յեղած գասակարգային թշնամիների կատաղի գիմագրության պայմաններում : 1931 թ. միասնական ֆինանսական պլանի կատարման հիմնական աղբյուրը հանդասանեաւ են սոցիալիստական սեկտորի ներքին կատակումները, վուրակային և բնակական ցուցանիշների կառարումը և ազգաբնակուրյան դրամական միջոցները :

31,9 միլիարդ ռուբլու միանական ֆինանսական պահանի յեկամտային մասի ամբողջ գումարից Համայնացված սեկտորի միջոցները կաղըում են 13,4 միլիարդ (արդյունաբերաթյան, տրանսպորտի, կոռուպտատիվ ձեռնարկությունների և այլն հասույթները)։ Սյապիսով, 1931 թ. մեր յերկրի բոլոր յեկամուտների 42 տոկոսը կազմում են Համայնացված սեկտորի կուտակումները։ Մնացած ռեսուրսներից մոտ 11 միլիարդ ռուբլի ընկնում է հարկերին, վորոնցից 9,4 միլիարդ

ոռութ. տալիս են համայնացված ձեռնարկությունները
և 3,8 միլիարդը կազմում են ազգաբնակության տված
միջոցները։ Վերջապես ապահովագրական կազմակեր-
պությունների միջոցները կազմում են 2,7 միլիարդ
ռուբրի։

10. Մեր տնտեսության համայնացված սեկառի
արագ աճումը արևեցտարի ուժեղացնում և սոցիալիս-
տական սեկտորի տնտեսական կազմակերպությունների
ֆինանսական միջոցները միասնական ֆինանսական պր-
լամում : Միասնական ֆինանսական պլանի այդ հոդ-
վածի կառարումը պահանջում է քանակական (արտա-
դրանքի տճումը) և վորակային (աշխատանքի արտա-
դրողականության բարձրացումը, ինքնարժեքի փթեցու-
մը, կոռակերացիայի ապրանքների ըջանառության ա-
րագացումը) ցուցանիշների կատարումը արդյունա-
րերության ու տրանսպորտի կողմից և Հատկապես
սպառհոսպերացիայի աշխատանքի լավացումը : Վորա-
կային ցուցանիշների կատարումը համայնացված սեկ-
տորում պետք է ապահովի ավելի քան 5 միլիարդ ռուբ-
րու մուտքը, արդյունաբերության ինենարժեքի 1 տո-
կոս իշեցումը կազմում է 180 միլիոն ռուբ . , շինարա-
րության արժեքի 1 տոկոս իշեցումը կազմում է 100
միլիոն ռուբ . , տրանսպորտի փոխադրումների արժեքի
1 տոկոս իշեցումը կազմում է 30 միլիոն ռուբ . : Ապա-
կոռապերացիայի ապրանքների շրջանառության ժամկե-
տի կրնառումը 9 ռուբ՝ կազմում է մոտ 300 մի . ռ .
ինայոդության : Այսուղից բնում է կենտկոմի և
կվաշի գեկտեմբերյան պլենումի վորոշումների հակա-
յական նշանակությունը, վորտեղ նշվեց, թե
«Ֆինանսական պլանի և բյուջեյի հաջող կատա-

բաւմը ուղղակի կախված է վորակային և բանակական ցուցանիշների կատարումից տնտեսության բոլոր նյուդերում»:

Վորակի համար մղված պայքարը հանդիսանում է
1931 թ. պլանի մարտական խնդիրը:

11. Ֆինանսական պլանի յերկամտային մասում իր տեսակաբար կըով յերկրորդ տեղը բռնում են ազգաբնակության միջնական մեջները (Հարկերը, փոխառությունները, փայտակուտակումները, ավանաները և փոխառությունների յետ գանձումը գյուղատնտեսական կոոպերացիայի գծով): Միջների այս աղբյուրը պետք է տա 5,6 միլիարդ ռուբ., կամ ֆինանսական պլանի ամբողջ գումարի մոտ 18 տոկոսը: Բոլոր այս կամագոր և պարուադիր վճարումները, իր ժամանակին հավաքվելով ազգաբնակությունից, կդառնան ամբողջ ժողովրդական տնտեսության ֆինանսավորման հզոր աղբյուրը: Ազգաբնակության դրամական հասույթները 1931 թ. կկազմեն 33 միլիարդ ռուբլի: Նրանք կաճեն 17 տոկոսով անցած տարվա համեմատությամբ՝ քաղաքի ազգաբնակության դրամական հասույթները կաճեն 15 տոկոսով, իսկ գյուղական աղդաբնակության նույնիսկ 21 տոկոսով անցած տարվա դիմաց: Ազգաբնակության հասույթների այսպիսի աճումը հնարավորություն կտա բարձրացնել ազգաբնակության միջնական դերը մեծ աշխատանքների պլանի կառարման գործում:

1931թ. միասնական Փինանսական պլանում յեկա-
մուտները ծախսերից ավելի յեն 1.500 մրկիսն ուրեմն :
Պահպանելով գրինամական խթան դիսցիպլինա, խճա-
յողության ոեժիմ տնտեսության բակը սյուռերում,

ամբողջ աշխատավոր ազգաքնակալքյան աշխատավ-
հային խանդակառությամբ, կստուգավի այդ ռեզերվը և
կապահովի փինանսական սիրոտեմի ամրապնդումը։ Ֆէ-
նահոսական պլանի մարտական խնդիրների կատարումը
պահանջում է լարել բոլոր ուժերը տնտեսական ամրութ-
տարվա և առանձնապես առաջին յեռամսյակի ընթաց-
քում։

ԱՐԱՋԻՆ ՅԵՌԱՄԱՎԱՐԻ ԽՆԴՐՆԵՐԸ

12. Առաջին յեռամյակում Փինանսական սխմտեմի
առաջ դրված հիմնական խնդիրն է լիովին և առանց
ընդդիշումների Փինանսավորել արդյունաբերության
կապիտուլ շինարարությունը, ցանքի կամպունիան,
կոնտրակտացիան և մթերումները հետագա յեռամ-
սյակների բնթացքում: Բացի դրանից առաջին յեռամ-
սյակում գետք ե կրտակիլի ռեզերվ 800 միլիոն ռուբ.
չափով: Այդ ռեզերվի կուտակումն ունի խոշորագույն
նշանակություն մեր չերվոնեցի գնողական կարողու-
թյան ամրացման գործում, հետեւքարար բոլոր աշխա-
տավորների նյութական դությունը լավացնելու գոր-
ծում:

Սա գահանջում է անպայմանորին կատարել և
գիրակատարել ազգաբնակության միջոցների և համայ-
նական սեկտորի ներքին միջոցների մորթիկացիայի ա-
ռաջադարությունները։ Կիրառելով սոցիբրոցման և Հար-
վածային մեթոդը, պրոլետարական վերահսկո-
վածային մեթոդը, պրոլետարական ապարատի,
դրամական տակ վերցնելով ֆինանսական ապարատի,
սպառկոռոգերաժիայի և արդյունաբերության աշխա-
տանքը, վճռականորեն Հաղթահարելով կուլտակների գե-
մադրությունը և թնամիների ազիտացիան, անհրա-
ժեշտ և անօրին և ժամանակին կատարել այն ներքին

միջոցների և վճարումների մօբիլիզացիայի պլանը
1931թ., վորոնք վելաբերում են 1931թ. առաջին
յեռամսյակին:

13. Ֆինանսական դժվարությունների վոր յե-
ղել են մեղ մոտ, — պատճառները ցույց են տալիս, վոր
«... ամենից առաջ նրանք բգիտում եյին ապրանք-
ների արհեստական կուտակումից, վոր դեռևս ներկա-
յում ել կա. ապրանքների այդ արհեստական կուտա-
կումը կազմակերպված եր գլխավորապես վասարար-
ների կողմից, ինչ վոր ներկայումս բացված է մի շարք
վնասարարների ձերքակալումից հետո, վորոնք աշխա-
տում եյին կոռպերացիայի և մատակարարման
որդաններում: Մեղ մոտ տեղի ուներ ապ-
րանքների շրջանառության արհեստական կատե-
ցում, վորով դրամը անշարժ եր մնում սպառողի մոտ:
Յերկրորդ, թույլ աշխատանք եր տարվում ազդար-
նակության միջոցների մորիլիզացիայի ասպարիզում,
և այսուղ, այս հարցում, ամենից ավելի ցայտուն
կերպով յերեվաց խորհրդային ապարատի առանձին
ողակների յետամնացությունը կուսակցության դիրեկ-
տիվները կատարելու դորժում» (ընկ. Կադանովիչի
գեկուցումից Մոսկվայի կազմակերպության կուսակ-
տիվում «կենտկոմի և ԿՎՀ-ի գեկտեմբերյան պլենումի
արդյունքների մասին»):

Միջոցների մոբիլիզացիայի գործում խոչըրագույն
հշամակություն ունի ապրանքների լաբումը: Ապա-
համել ապրանքների արագ հասնելը սպառողին,
թույլ չտալով, վոր այդ ապրանքները պառկած մնան
առելութական սիստեմի միջնորդ ողակներում, —
հանդիսանում է 1931թ. Քինանսական պլանի կա-
տարման ամենակարելոր մասերից մեկը: Բանվորա-

կան լայն մասսաները, կոլխոզնիկները և գյուղի չքա-
վոր ու միջակ մասը իրենց կոռպերատիվ կազմակեր-
պությունների միջոցով (կոռպերյուրոներ) արթուն
վերահսկողության տակ պետք ե վերցնեն կոռպերա-
ցիայի ամբողջ աշխատանքը, նպաստելով, վոր ինչ-
քան հնարավոր ե ապրանքներն ավելի արագ հասնեն
սպառողին:

Հավաքված դրամական միջոցները չպետք է պառ-
կած մեան գանձնվեն համապատասխան վարկային հիմ-
նարկներին: Հավաքված միջոցների ամեն մի կուտա-
կում ստորին գանձարկոներում, գանձողների մոտ,
սպառհառողերացիայի խանություններում և այլն, դժվա-
րացնում ե այդ միջոցները իրենց նպատակին ոգտա-
գործելու հնարավորությունը: Անհրաժեշտ է կազմա-
կերպել վերահսկողություն, վորովիալի դումարները
ժամանակին հանձնվեն վարկային հիմնարկների դը-
րամարկոներին:

14. Ապրանքաշրջանառության արագացման և գլ-
րամական միջոցների արագ շարժման հետ միասին,
միջոցների մորիլիզացիայի կարեկորագույն աղբյուր
են հանդիսանում ազգաբնակության դրամական մի-
ջոցները: Միանվագ կուտիարկը, պետինխառուրյաւե-
ների ծրագրի կատարումը, աշխատավարեների խնայողու-
թյունների ներգրավումը պետինայդրամարկղների
սփառելում, տրակտորցենտրի ակցիաների գետեղումը,
փայակուտակման ծրագրի լրիվ կատարումը, ավանդ-
ներ և պահանջեր սպառողական և կոռպերացիայի բո-
լոր այլ տեսակներում, փլատավոր բյուների ժամանա-
կին յետ գանձումը գյուղկոռպերացիայում, — սրանք են

աղդաբնակության միջոցների մորիլիզացիայի ուղիները:

1931 թ. միասնական ֆինանսական պլանի, առանձնապես առաջին յեռամսյակի, կատարումը կապված է մեծ դժվարությունների հաղթահարման հետ:

Սոցիալիստական շինարարության հաջողություններին զրոգնթաց սրվող դասակարգային պայքարը, համատարած կուլեկտիվացման հիման վրա վորպես դասակարգ լիկվիդացիայի յենթարկվող կուլակության կատաղի դիմադրությունը, համաշխարհային բուրկադիմադրությունը, համաշխարհային բուրկադիմադրությունը, իմժուաղիայի գործակալների մասարարությունը, պերիալիստների կողմից պատերազմի տենդային պատրաստությունը աշխարհիս առաջին պրոլետարական պետության դեմ, մեր հետամնացությունն ամենակարծ ժամանակամիջոցում վերացնելու անհրաժեշտությունը—պահանջում են ոշխատանքի բայլելիկայն մարտական տեմպեր, մասսաների աշխատանքային վերելքը գլխավորելու և նրանց ակտիվությունը մորիլիզացիայի յենթարկելու կարողություն՝ կատարելու համար հնդամյակի յերրորդ տարվա տնտեսական և ֆինանսական խնդիրները:

Միայն կապիտուլյանտական-կուլակային աջ ուղղությունիզմը կարող է հանդել մեր յերկրում դասապորտունիզմը կարող է հանդել մեր յերկրում դասապարագարի «լերացման թեորիային», «կուկարգային պայքարի» «լերացման թեորիային», «կուկարգային սոցիալիզմի մեջ խաղաղ ներաճելու» թեորիակի՝ սոցիալիզմի մեջ խաղաղ ներաճելու: Միայն դասակարգային թշնամու գործակալները աջ և «ձախ» ոպորտունիստները և աջ-«ձախ» բլոկ (Սիրով-Լոմինաձե)՝ կարող ելին պահանջել ինդուստրացման և կուլեկտիվացման տեմպերի կրծատում, տրացման և կուլեկտիվացման տեմպերի կատարում, հնդամյակի յերրորդ տարին վերածել «սխաների

ուղղման տարի»: Բանվոր դասակարգից կտրված մարդիկ միայն կարող ելին վարկաբեկել աշխատավորների մեծագույն ենտուղիազմը, վորն արտահայտվում և սոցմրցման, հարվածայնության, հանդիպական արդիքինաների և այլ ձեզով:

Կուսակցությունը և բանվոր դասակարգը վճռականորեն դեն չպատեցին աջ և «ձախ» ուկլոնիստների կապիտուլյանտական ամեն տեսակի առաջարկությունները և իրագործեցին սոցիալիստական ծավալուն հարձակում ամբողջ Փրոնտով, պայքարելով հնգամյակը չորս տարում կատարելու, բարձր վորակի, ֆինանսական պլանի կատարման համար:

Յերկու Փրոնտի վրա մղված անհաշտ պայքարում — և առանձնապես աջ վտանգի դեմ, վորպես գլխավորը ներկա ետապում — կուսակցությունը և բանվոր դասակարգը հասան հսկայական հաջողությունների սոցիալիստական շինարարության Փրոնտում:

Վճռական և անհաշտ պայքարը յերկու Փրոնտի վրա և Փինանսական քաղաքականության ասպարիդում—թե Յուրյուսկու—կոնդրատյեվի և այլոց վընասարարական թեորիայի դեմ, վորոնք փորձում ելին կասեցնել յերկրի տնտեսական զարգացումը, մի թեորիա, վորը ուղղությունը բռնում եր դեպի չուկայի կարգավորող դերը, և թե այն «ձախ» խոտորումների դեմ, վորոնք արտահայտվում ելին «Փինանսական սիստեմի դերի ու նշանակության թերագնհատությամբ սոցիալիստական շինարարության ներկա ետապում» — անհրաժեշտ պայման և միասնական Փինանսական պլանի պատասխանատու խնդիրները կատարելու համար:

15. Հնգամյակի յերբորդ տարվա Փինանսական պլանը — դա քաղաքում և գյուղում սոցիալիստական շինարարության բայլչեվիկյան տեմպերի, ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական ռացիոնալիզացիայի հսկայական խնդիրների, սոցիալիստական շինարարության համար ժողովրդական ռեսուրսների հսկայական մօբիլիզացիայի, կաղինական հարկան տարրերի վրա սոցիալիստական ծավալուն հարձակման և յերկրի պաշտոնականունակության վճռական տմբացման պլանն է:

Մեր յերկրում կա այն ամենը, ինչ անհրաժեշտ և բավական է, վորպեսզի հնգամյակի յերրորդ տարում ավարտի սոցիալիստական տնտեսության հիմքի կառուցումը: Այդ հնարավորությունները լիովին ոգտագործելու համար անհրաժեշտ է կուսակցության դըլիավոր գծի հիման վրա շարունակել մասսաների մոռքիվացիան այդ ճանապարհի վրա յեղած աճման դըլգարությունները հաղթահրելու համար:

Անհրաժեշտ է, վոր յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր կալինովսկի և բոլոր աշխատավոր մասաները ակտիվ մասնակցություն ունենան ամբողջ ֆինանսական պլանը լիովին և իր ժումանակին (ըստ ամրությի և յեռամայակների) իրագործելու մեջ, վորպեսդի յուրաքանչյուր առանձին ժամանակամիջոցում (յեռամայակ, ամիս) լիովին լուծվեն դրված խնդիրները: 1931թ. առաջին յեռամսյակը հանդիսանում է պատասխանատու կվարտալ Փինանսական պլանի կատարման համար, վորովհետեւ նա պետք է լիովին ապահովի ժեղադարձությունը և առաջարկությունը կամացական կամացական դիմումը:

Կազմումը, վոր նախադավագ և միասնական Փինանսական պլանում:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՄԻԱՆՎԱՐԴ ՀԱՅԿԻ ՄԱՍԻՆ

Վորպես պատաման «Արդյունաբերական կուսակցության» վնասարարների քայլքայիշ աշխատանքի, քաղաքի և գյուղի աշխատավորները հանդես յեկան հաղարավոր առաջարկություններով բաց թողնելու լրացուցիչ փոխառություն, պակասեցնելու նրա վճարման ժամկետները և այլն: Մասնավորապես (և աւանձնապես կենտղործկոմի III նատաշընի աշխատանքների ըրջանում) բանվորական և կորիոզային առաջազորմասայից բազմաթիվ առաջարկներ յեղան մտցնելու հատուկ լրացուցիչ հարկ տնտեսական և կուլտուրական կարիքների համար: Այսպես, որինակ, Լողովհէնայիշ ըրջանի Մանգելովակի և Բարդովհչենակի գյուղխորհուրդների ընդհանուր ժողովը վորոշեց:

«Սոցիալիստական շինարարության բուռն աճումը պահանջում է հսկայական ծախսեր բավարարելու համար կուտառական աճող կարիքները: Ժողովն անհրաժեշտ է համարում աղբաբնակության լրացուցիչ միջոցները ներդրավել կուտառանտեսական կարիքների համար, ուստի և խընդրում է կենտղործկոմին մտցնել հատուկ հարկ կուլտուրական կարիքների համար»:

Այսպիսով այդ հարկը հանդիսանում է մի ձեռնարկում, վոր իրագործվում է իրենց՝ աշխատավոր մասաների նախաձեռնությամբ:

Հունվարի 10-ին «Խզվեստիայում» հրատարակված

Ե հունվարի 9-ի որենքը «անտեսական և կուլտուրական շինարարության համար գյուղական շրջաններում միանըվադ հարկի մասին»: Դրանից հետո հունվարի 14-15-ին նույնպես «իդվեստիայում» հրատարակվեց մի դեկրետ «տնտեսական և կուլտուրական շինարարության համար քաղաքում միանվագ հարկի մասին»: Պետությունն իր վրա յեւ վերցնում կուլտուր-տնտեսական շինարարության խնդիրների իրավործման ծախսերի մեծ մասը, բայց վորոշ չափով այդ ծախսերը եր վրա պետք և վերցնի և ազգաբնակությունը:

Առքան և յերբ են գանձվելու հարկերը

Հարկի ընդհանուր գումարը վորոշվում է մոտավորապես 350 միլիոն ռուբ., վորից քաղաքում՝ 150 միլիոն ռուբ., գյուղում՝ 200 միլիոն ռուբ.: Հարկի ամբողջ գումարը գանձվելու յեւ գյուղում մինչեվ մարտի 15-ը: Այս ժամկետը կարեվոր է նրա համար, վոր 1) ռեսուրսների մորիլլացիայի 1931 թ. առաջին յեռամսյակի կատարումը կանխորոշում է տարեկան ամբողջ պլանի հաջող կատարումը, 2) առաջին յեռամսյակի վերջը զուգադիպում է գարնանացանի կամպանիայի սկզբին, գյուղացիության մասսայական շարժմանը գեղի կոլխոզները և մի շարք այլ ձեռնարկումների թե՛ քաղաքում և թե՛ գյուղում, վորը պահանջում է ավարտել հարկերի գանձումը մարտի կեսից վոչ ուշ, 3) առաջին յեռամսյակի սկզբին գյուղի պարտադիր վճարումները գրեթե վերջացած են և միաժամանակ աճել են գյուղական ազգաբնակության յեկամուտները, ինչ վոր հնարավորություն է տալիս լիովին և ժամկե-

տից առաջ կատարել մոչ միայն կամավոր վճարումների տարեկան ծրագիրը, այլ և հիշյալ հարկի: Ինչպես պետք է անցկացնել միանվագ հարկը գյուղամաս) Ով և յենթակա միանվագ հարկի

Միանվագ հարկը վճարում է ամբողջ ազգաբնակությունը, վոր ապրում է գյուղական վայրերում, անկախ այն բանից, վճարել են, թե չի վճարել գյուղհարկը: Այլ խոսքով, միանվագ հարկը գանձվում է անհատական կերպով հարկված տնտեսություններից, միջակ տնտեսություններից, այն տնտեսություններից, վորոնք հարկի յենթակա չեղող մինիմումով կամ հարկային հանձնաժողովների կողմից ազատված են գյուղհարկից, այն կոլխոզներին վորոնք ունեն չհամայնշված հասույթներ, գյուղում ապրող և գյուղական տնտեսություն չունեցող բանվորներից ու ծառայողներից:

Գյուղական վայրերում միանվագ հարկից ազատավում են.

1. Բոլոր կոլխոզները, վորչափով նրանք իրենց յեկամուտներից բաժին են հանում տեղական կուլտուր-տնտեսական կարիքների համար:

2. Հհամայնացված հասույթներ չունեցող կոլխոզները:

3. Այն բանվորներն ու ծառայողները, վորոնց աշխատավարձը ամսական 30 ռուբլուց ցած ե:

Միանվագ հարկը, ինչպես յերեվում է նրա անունից, մի անգամից գանձվող հարկ ե: Այս հարկից հավաքված միջոցները ծախսվելու յեն այն տնտեսական և

կուլտուրական կարիքների համար, վոր տեսնեն դյուզը
կամ շրջանը, վորոնց զարգացման մեջ շահագրգռված
է դյուզի աշխատավոր ամբողջ ազգաբնակությունը:

բ) Համարումների չափերը

Ինչպես ամբողջ հարկային քաղաքականության
մեջ, նույնպես և միանվագ հարկի գանձման մեջ անց ե
կացված դասակարգային պարզորոշ գիծ: Կուլտակային
տնտեսությունը միանվագ հարկ վճարելու յի իր վճա-
րելիք դյուզհարկի 100%-ի չափով: Մեկ կուլտակային
տնտեսության միջին զրույթը կկազմի մոտ 310 ոուր: :
Միջակ տնտեսությունների մեջ ամբողջ Միության հա-
մար հարկի չափը սահմանվում է դյուզհարկի գումարի
65%-ը: Առ նշանակում ե, վոր մի միջակ տնտեսու-
թյան վրա միջին հաշվով ընկնում է 10-12 ռ. միանր-
գագ կուլտհարկ: Գյուզհարկից ազատված տնտեսու-
թյունները վճարում են վորոշված մի դումար 5 ռ.
չափով: Զհամայնացված տնտեսություն ունեցող կու-
լտագները նույնպես վճարում ե վորոշված գումար 4 ռ.
չափով: 30-ից մինչև 75 ռ. սամացող բանվորներն ու
ծառայողները վճարում են վորոշված գումար՝ 5 ռ.,
իսկ 75 և ավելի ստանալու գելքում — 10 ոուրիք:

Հարկն անց ե կացվում դասակարգային սուր պայ-
քարի պայմաններում, և կուլտակն ամեն կերպ կձգտի
խափանել այդ հարկի զանձումը: Միանդամայն ան-
թույլարելի յի վորեն չափով կրկնել դասակարգային
զծի շեղումները միանվագ հարկի զանձման ժամանակ:
Կուլտակից ստացվելիք գումարները պետք ե գանձվեն
անհապատ, միաժամանակ անհրաժեշտ միջոցներ ձևոք
առնելով, վորպեսզի նա չխուսափի վճարելուց, մի-
միդաշարայի յինթարկելով իր դույթը: Ժամանակին բար-

ցատրական աշխատանք տանելով դյուզի չքայորմի-
ջակ մասսաներում, անիբաժեցն ե աղահովել հարկի
գանձումը լիովին և ժամկետից առաջ:

Ինչպես պետք ե անցկացնել միանվագ հարկը
բաղաբներում

ա) Հարկ ճվարողները

Քաղաքներում որենքով միանվագ հարկը վճարում
են վորելցից յիկամուտ ունեցող քաղաքացիները:

բ) Հարկի վճարման կարգը և ժամկեաները

Բանվորները, ծառայողները և կոոպերատիվ ար-
տելների անդամները, վորոնք վճարում են յեկամտա-
յին հարկ իրենց ծառայության կամ աշխատանքի տե-
ղում, կուլտհարկ վճարելու յին յեկամտային հարկի
հինգ ամսվա դրույթի չափով: Այս գումարը վճարվում
և չորս ամսվա ընթացքում, պահպելով աշխատավար-
ձիք:

Զկոոպերացված տնայնագործները և արհեստա-
վորները միանվագ հարկը վճարում են յեկամտային
հարկի տարեկան գումարի 40 %-ի չափով, և վորով-
հետեւ տնայնագործների և արհեստավորների համար
յեկամտային հարկը զգալիորեն ավելի բարձր ե, քան
բանվորների և կոոպերացված տնայնագործների յեկա-
մտային հարկը, հետեւ վայել միանվագ հարկի չափերը
նույնպես մոտ յերկու անդամ ավելի յին:

Քաղաքում հարկի հիմնական գումարը վճարում է
բուրժուազիան — անաշխատ տարրերը — նախ՝ նրանց
վճարած յեկամտային հարկի տարեկան գումարի ձե-
փով, և յիրկրորդ՝ կրկնապատկելով նրանց շնչքերի-
տների հարկը: Շենքեր ունեցող բանվորներն ու ծառա-
յողները աղատվում են շենքերի վրա դրվելիք միանվագ

Հարկից : Ուրեմն , բազաբում միանվագ հարկի կեսից ավելին ընկնում և անաշխատ տարրերի վրա :

Միանվագ հարկից հավաքված գումարները ծախսվելու յեն բավարարելու համար տեղական քաղաքային և շրջանային կարիքները — դպրոցները , հիվանդանոցները , բարեկարգությունը և այլն :

2. ՊԵՏԱԿԱՆ ՓՈԽԱՌԱՒԻԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ֆինանսական պլանով պետական փոխառությունների ծրագիրը ընթացիկ տարում սահմանված և մեկ միլիարդ յերեք հարյուր միլիոն ռուբլի՝ անցած տարվա 767 միլ. ռուբլու դիմաց : Նման մի ծրագիր պահանջում է ծավալուն մարտական հասարակական աշխատանք՝ նրա շուրջը մոբիլիզացիայի յենթարկելու քաղաքի և գյուղի ամենալայն մասսաների ակտիվությունը :

Վա՞րդան ճեմ այժմ գործնական խնդիրները պետքախառնությունների բնագավառում :

«Հնդամյակը-չորս տարում» փոխառությունը , վորք թողեց կառավարությունը բանվորների առաջավորիչմբերի նախաձեռնությամբ , վայելում և մեծ ժողովրդականություն և ոժանդակություն աշխատավորների շրջանում : Սակայն քաղաքում կան բանվորների խմբեր , վորոնք դեռ չեն բաժանորդագրվել փոխառությանը : Այսպես , որինակ , այսպիսի խոշոր գործարաններում , ինչպիսին և «Կրասնի Պուտիլովեց»-ը , մոտ 6 հազար բանվորներ ընդդրկված չեն յեղել բաժանորդագրության մեջ , ելեկտրոդավողում — մոտ 3 հազար : Անհրաժեշտ և քաղաքում լայն ծավալել ինքնաստուգումը 100 տակոսվ ընդգրկելու աշխատավորներին «Հընդամյակը -չարս տարում» փոխառության մեջ : Այս ինք-

նաստուգումը պետք է կազմակերպվի ամեն մի ֆարբիկայում , գործարանում և հիմնարկում :

Քաղաքում առանձին ուշադրություն և պահանջում նաև պրոֆմիությունների մեջ չկազմակերպված աշխատավորների սեկտորը , վորտեղ դեռևս շատ քիչ են ոգտագործված բոլոր հնարավորությունները : Անհրաժեշտ և ուժեղացնել աշխատանքը այս ասպարիզում , տարածել ինքնաստուգումը մասնավորապես նաև արտելներում և տնայնագործների կոռպերատիվ այլ միությունների մեջ ու ժակտերում (բնակչարժեկուողներ) :

Գյուղում փոխառության տարածումն անցնում և անբավարար : Ներկայում հիմնական խնդիրն և առավելագույն չափով ուժեղացնել մասսայական աշխատանքը գյուղում փոխառության իրացման համար : Այս գործին պետք է լծվեն գյուղի բոլոր հասարակական կազմակերպությունները , գյուղի կուսակցական և խորհրդային ակտիվը պետք է գործի անցնի : Կոլտնտեսությունները , մեմենաւորակտորային կայանները , խորհումնեսությունները պետք է դառնան խսկական հենակետեր տարածելու փոխառությունը անհատական տնտեսությունների մեջ : Փոխառության իրացումը պետք է ուժեղացվի կուլակային և զյուղի ունելոր տնտեսությունների մեջ : Այս գեպօւմ յերբ նըրանք խուսափում են դնել պարտատոմները , պետք է կիրառել հասարակական ներգործության մեթոդներ : Պետք է ինքնաստուգումն անցկացնել նաև կոլյոզներում և խորհումնեսություններում «Փոչ մի կոլյոզնիկ , սովորողի վոչ մի բանվոր առանց փոխառության պարագատոմնի» լոգունդով : Միաժամանակ , հինգելով կոլ-

խոզային և սպլուզային հասարակայնության ակտի-
վության և կամավորության վրա, անհրաժեշտ է, վոր
բաժանողագրության միջին չափը կուլտուրական
և կտորում հասնի կոլխոզների 15 աշխատանք՝ որին
յեկամտին, իսկ սովորությունը՝ յերկու չարաթվա-
աշխատավարձին :

Քաղաքի ձեռնարկությունների հասարակական
կազմակերպությունները պատասխանատու յեն վոչ
միայն իրենց կողեկտիվի բանվորների ու ծառայողների
լիակատար բաժանորդագրության, այլ և իրենց յեն-
թաշեֆ գյուղերում քաղաքական այլ աշխատանքի զը-
րության համար։ Շեֆական կազմակերպությունները
պետք է զրազվեն նաև իրենց յենթաշեֆ շրջանների
ինքնաստուգումով և գործնականորեն իրազործեն ի-
րենց ազդեցությունը՝ տուավելագույն չափով մոխա-
ռությունների բաժանորդադրության մեջ ընդգրկելով
յենթաշեֆ շրջանի ազգաբնակությունը և կատարելով
կոնսորտային առաջադրությունը։ Հոկայական նշանա-
կություն ունին բաժանորդադրության ձեփակերպումը,
հոկողություն, վորտեսպի ժամանակին դանձվեն բա-
ժանորդագրության մուծումների և նրանց արագ հոմա-
նումը Պետրանին կամ ինայդական դրամարկներին։

ՅՆԱՑՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂՆԵՐԻ

Խնայողական դրամարկների գծով Փինանսական
պլանը նշում և ավանդների գանձում 400 միլիոն ոռու-
րու չափով։

Իրազործելով՝ «վ.ոչ մի աշխատավոր առանց
խնայողական գրքույի» — գործնական լոգունգը, մենք
այս տարի ներգրավելու յենք 13 միլիոն նոր ավանդա-

տուների, նրանց ընդհանուր թիվը տարվա վերջին հաս-
ցնելով 25 միլիոնի։

Մնաբաժեշտ է աշխատել, վոր խնայողական դրա-
մարկներում ավանդների մնացորդը շարունակ աճի։
Յուրաքանչյուր ավանդատուն իր խնայողական գրքույ-
կում պետք է ունենա մշտական մնացորդ իր դրամա-
կան յեկամուտների կես ամսվա գումարից վոչ պակաս։

Յանցի լայնացման հետ միաժամանակ խնայողա-
կան ապարատի առաջ զրված է աշխատավորների ամե-
նորյա կարիքների սպասարկման վրակի վեռական լա-
վացման խողիրը։ Կառավարության վորոշումը խնայ-
դրամարկների մասին նախատեսում է մտցնել պետ-
վարկի և խնայողական գործի հասարակական իրահան-
գիչների խնայութու, վորպեսզի խնայութամարկղները
դառնան իսկական մասսայական վարկային ապարատ,
վորն աշխատում է հասարակական մեթոդներով։

Հասարակական ուժերի գործնական լայն մատնակ-
ցությունը խնայողական գործին՝ կիարողանա ապահո-
վել խորհրդային յերկը պայմաններում սոցիալիստա-
կան շինարարության այլ ճակատամասի զարգացման
խկապես չունենած թափ։ Խնայողական գործի յուրա-
քանչյուր ակտիվիստի պարտին է դառնալ խնայութա-
մարկղների և պետվարկի հասարակական իրահանգիչ։

Կառավարության դեկրետը խնայութամարկղների
մասին նախատեսնում է կազմել 3 միլիոն ոռուր փուլի
պարզնվարելու համար այն տեղիումներին, գործար-
կումներին, կոլլուզոնների վարչություններին, ինչպես և
առանձին ակտիվիստներին, վորոնց լավագույն կերպով
կիազմակերպեն իրենց մոտ խնայութամարկղների սպա-
սարկումը և կապահպեն ավանդների ամենալայն հո-
սանքը դեպի խնայողական դրամարկղները։

Առանձին դեր ունի լայն բացատրական աշխատանքը բանվորների և գյուղացիության աշխատավոր ժամաների մեջ, թե ինչ նշանակություն ունին ֆինանսական և ժողովրդական ամբողջ տնտեսության համար հեղախիլ հաջիվները (безналичные расчеты) պետական և հասարակական կազմակերպություններին և Հիմնարկներին լինելիք վճարումների ժամանակի:

Առանձին անհատների՝ պետական հիմնարկների հետ ունեցած դրամական հաշիվները կանխիկ դրամով կարգավորելու սովորական յեղանակը կասղված ե շատ գործարությունների հետ, պահանջում ե մեծ քանակությամբ դրամանիշեր. շրջանառության մեջ դնել, ունենալ դրամ պահելու բազմաթիվ տեղեր, ավելորդ դրամարկային աշխատանք և այլն:

Անկանխիկ հաշիվը վճարման այնպիսի ձեվ է, յերբ վճարողը հիմնարկի հետ, վորին նա վճարելու յիշ, հաշիվը մաքրում ե վոչ թե կանխիկ դրամով, այլ գրավոր կարգադրություն և անում իր ավանդը պահող խնայութամարկին կատարելու հասանելիք վճարումը Այս կերպով գյուղացին կարող է վճարել գյուղատնտեսական հարկը, ապահովագրական մուծումը, ինքնաշարկումը, բանվորը՝ բնակվարձը, եկեկորականության, ջրի մուծումները և այլն:

Այս կարգը շահավետ և վճարողին և մեծ ոգուտ ե մեր ֆինանսական տնտեսությանը: Խնայրաբերում մեր ֆինանսների խիստ ցանցը կարող է և պետք ե զգալի դեր խաղա սոցիալիստական յնարարության համար այդ կարեվոր խնդրի իրավուրծման մեջ:

Անկանխիկ վճարումներն արդեն բավական լայն ընդունելություն են դտել: Այսպես, որինակ, 1930 թ.

193 կետերում կատարված են 286 հազար ոպերացիաներ 10,467 հազար ոուրլու գումարի, իսկ նոյեմբերին անկանխիկ վճարումները անց են կացվել արդեն 273 կետերում, ոպերացիաների թիվը հասել է 450 հազարի, իսկ գումարը՝ 12,409 հազար ոուրլու: Անկանխիկ վճարումները մեծ նշանակություն ունեն պետության համար, նպաստելով նոր միջոցների ներդրավմանը ինայողական դրամարկղներում, միևնույն ժամանակ նըրանք ստեղծում են մեծ հարմարություններ աշխատավորների համար ժամանակի խնայողության տեսակետից, ինչպես և նպաստելով տեղական բյուջեյի պլանավորմանը և ռացիոնալացմանը: Անկանխիկ վճարումների խնդրում աշխատանքը պիտի ե տարվի կամավորության սկզբունքը, քոյլ չտալով շեզումներ և աղավաղումներ: Պետ-փախառությունների և խնայութամարկղների ծրագրի կատարման, փոխառության բաժանորդագրված և խնայութամարկղների սկանդատու աշխատավորմերի լայն սպասարկման պատաշխանատվությունն առանձնապես ընկածում ե պետվարկին և խնայութամարկղին ոժանեղակող հանձնաժողովների վրա, վորոնք գյուրթյուն ունեն բայր խորհուրդներին, ձեռնարկություններին, հիմնարկներին, կոլուզմերին և սովորություններին կից: Անհրաժեշտ և վճռականորեն աշխատացնել այդ հանձնաժողովների աշխատանքը, ուժեղացնել նրանց կազմը հարվածայիններով և առաջավոր կոլիսզնիկներով ու ստեղծել լայն ակտիվ փոխառությունների և խնայութամարկղների աշխատանքի շուրջը: Պետք ե ապահովել ոժանեղակող հանձնաժողովների սմբռյա աշխատանքը, այս աշխատանքը պիտի ե դառնա բարգակում՝ արհմիությունների, իսկ գյուղում՝ խոր-

հուրդների և հասարակական կազմակերպությունների ամբողջ գործունեյության որգանական մասը :

4. ՓՈԽԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՆՉՈՒՄԸ ԳՅՈՒՂՎԱՐԿԻ ՄԻՍՏԵՄՈՒՄ

Ֆինանսական պլանը նախատեսում է գյուղատնտեսական բազմաթիվ ձեռնարկումների Փինանսավորումը : Խոշոր վարչեր են տրվում կոլտողների մեքենայացման և մեխանիզացիայի, անասուններ ձեռք բերելու, ինչպես և մի շարք այլ տնտեսական ձեռնարկումների համար :

Բավկանաչափ վարչեր են տրված նաև անհատական տնտեսություններին : Կան գեռ կուլտակային տնտեսություններից չգանձված փոխառվություններ : 1931 թ. ընդամենը գանձվելու յե 700 միլիոն ռուբ . փոխառվություն, վորից 160 միլիոն ռուբ . առաջին կվարտալում : Պահպանելով դասակարգային խիստ սկզբունք փոխառվությունները զանգելու ժամանակ, անորածեց և ամենայն վիճակնությամբ սեղմել կուլտակային տնտեսությունները : Կոլխոզները պետք ե որինակ տան ֆինանսական դիսցիլինայի, և պետության հանդեպ իրենց ունեցած բոլոր պարտավորությունները նշորեն կատարելու մեջ : Տնտեսական պլանի կատարումը պահանջում է, վոր բոլոր կազմակերպությունները և ամեն մի աշխատավոր ժամանակին և լիովին կատարի իր պարտավորությունները պետության հանդեպ, վորը առաջին հերթին պետք ե արտահայտի պետությունից առաջացած փոխառվությունները ձիցու ժամանակին և ամբողջովին վերազարձնելու մեջ : Այսպես, ինչպես և մյուս բոլոր վճարումների մեջ, առանձին

նշանակություն ունի առաջին յեռամոյակի պլանի կատարումը և գերակատարումը :

5. ՏՐԱԿՏՈՐՑԵՆՏՐԻ ԱԿՑԻԱՆԵՐԻ ԶԵՏԵՂՈՒՄԸ

Տնտեսական պլանը ծրագրում է մեծ թափով տրակտորներ մատակարարել զյուղատնտեսությանը : Գյուղացիական լայն մասսաները, թե՛ կոլխոզներում միացածները և թե՛ առաջիկայում կոլեկտիվացողները, չահագրգույած են ստանայու գյուղատնտեսական մեքենաներ, առանձնապես կազմակերպելու մեքենա-տրակտորային կայաններ, վարմագուցել են լայն մասներին իրենց մեծ ողափարությունը :

Գյուղացիության լայն մասսաների մասնակցությունը մեքենա-տրակտորային կայանների կազմու-կերպման մեջ պետք ե արտահայտի լիովին և ճիշտ ժամանակին կատարելով միջոցների մուրիլիցիայի պլանը, Տրակտորցենտրի ակցիաները զետեղելու միջոց : Կուլտակը և նրա կողմանակիցները, կատարի դիմադրությունը ցույց տալով կոլեկտիվացմանը, բնականարար իրենց ագիտացիան ուղղում են մերժեա-տրակտորային կայանների : Կազմակերպման դեմ : Անհրաժեշտ է, վոր լայն մասսաները կոլխոզների գլխավորությամբ խիստ հակահարված տան կուլտակային աղխացիային, աշխատելով արագորեն զետեղել Տրակտորցենտրի ակցիաների՝ պլանով նախատեսված գումարը (160 ռուբ .) հենց առաջին յեռամսյակում, ամուր հիմք զենքելով մեքենա-տրակտորային կայանների շինարարության պլանի կատարմանը :

6. ԱՊԱՌԿՈՈՊԵՐԱՅՅԻՅՅԻ ՅԵՎ ԿՈՈՊԵՐԱՅՅԻՅՅԻ ԱՅԼ
ՏԵՍԱԿՆԵՐԻ ՓԱՅԵՐԸ, ԱՎԱՆԴՆԵՐԸ ՅԵՎ ՄՐԻ.
ԹՈՒՄՆԵՐԸ

Ազգաբնակության զրամական միջոցների մորիլի-
քացիսայի սիստեմում խռով նշանակություն ունեն կո-
մալոր ժուծությունը կոոպերատիվային սիստեմի մեջ։
Միանական ֆինանսական պլանը նախատեսում է այդ
վճարումների աճումը 1931 թ. մոտ 660 միլիոն ռուբ.
դումարով։ Այս պլանի կատարումը, ավելացնելով ֆի-
նանսական սիստեմի միջոցները, հսկայական նշանա-
կություն ունի աշխատավորության լայն մասսա-
ներին կոոպերատիվ սիստեմի գործունելությու-
նը ակտիվ կերպով մասնակից գարձնելու գործում,
աղահովում և սովորակոոպերացիայի ըրչանառության
միջոցների ավելացումը, վորով և նորաստում և աղ-
րանքաշրջանառության արագացմանը։ Անիրաժեշտ է
մորիլիքացիայի յենքարկել բանվորների, կոլխոզների
և գյուղացիուրյան չքավոր-միջակ մասսաների
ուշադրությունը, վորպիսդի իրավորդիքի բոլոր աշ-
խատավորներին կոոպերացիայի մեջ ներգրավելու
խնդիրը, աշխատելով լիովին և ժամանակին վնարել
փայտանուժումները, սոցմրցման մերողների լայն կի-
րառման հիման վրա։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	ԵԶ
Ընդհանուր մաս	3
Ֆինանսական պլանի խնդիրներ	8
Առաջին յենքարկայի խնդիրներ	15
Համապատ անդեկտուրյաններ	21
1. Միանվագ հարկի մասին	21
2. Գետական փախառությունների մասին	26
3. Խնայողական դրամարկղները	28
4. Փոխառությունների զանուրը գյուղարկի սիս- տման	32
5. Տրավորքենարի ակցիաների գետերումը	33
6. Ապանկոռապերացիայի և կոոպերացիայի այլ սե- ռակների փայերը, ավանդները և մուծունները	33



ՀՀ Ազգային գրադարան



NL0044940

ԳՐԱՅԻ ՏԵ ԿՐՈՎ (1 մ.)



Единый финансовый план 1931 г. и мобилизация средств населения

Госиздат ССР Армении
Эревань 1931